

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԻՐԱՆՈՒՇ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԻՍՊԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ՀԵՆՐԻԿ ԱՆՏՈՆԻ ԷԴՈՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ՍՈՆԱ ՍԱՐԳՍԻ ՍԵՖԵՐՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու
ՌՈՒԶԱՆ ԱՐՇԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Վ. Բրյուսովի անվան
պետական լեզվահասարակագիտական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. փետրվարի 3-ին, ժամը 14:00 ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Ա. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. դեկտեմբերի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

բանասիրական գիտությունների թեկնածու

Ս. Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքը նվիրված է իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեմային անդրադարձած ստեղծագործությունների համալիր քննությանը:

Ժամանակակից գրականությանն ու արվեստին հետաքրքրում են 21-րդ դարի մարդու դեմ ծառացած հարցերը (<<աքսուրդի>> անվերապահ հաստատումից մինչև համամարդկային մեծ մտահոգությունները), որոնք նախանշեցին գեղարվեստական մտածողության վերափոխումն ու գեղարվեստական իդեալի որոնումները. սրանով պետք է բացատրել համաշխարհային գրականության առավել արդիական թեմաների մեջ ցեղասպանության ներգրավումը, ժամանակակից աշխարհի համամարդկային հիմնախնդիրների մեջ նրա մուտքը:

Իսպանիայում հայոց ցեղասպանության մասին սկսեցին խոսել միայն անցյալ դարի 80-ականներին, իսկ իսպանացի նշանավոր լրագրող Խոսե Անտոնիո Գուդիարանը առաջինն էր, ով գեղարվեստի լեզվով պատմեց այն:

Մեր ատենախոսության երեք գլուխներում փորձ է արվել վերլուծել հայոց ցեղասպանության թեման պատկերող վեպերը, բանաստեղծություններն ու հրապարկախոսական հոդվածները, քննել դրանց գեղարվեստական-էսթետիկական չափանիշները: Փորձել ենք ուսումնասիրել իսպանական մամուլում ու գիտական գրականության մեջ հայոց ցեղասպանությանը վերաբերող բոլոր քիչ թե շատ նշանակալի անդրադարձները, գրականությանը և գրականագիտությանը վերաբերող հարցեր:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է ժամանակակից գրականագիտության մեջ թեմայի ուսումնասիրվածության բացով:

Իսպանացի գրողների՝ հայոց ցեղասպանությանը նվիրված ստեղծագործությունների ուսումնասիրությանը հայ քննադատական միտքն առհասարակ չի անդրադարձել, ավելին, այս ստեղծագործությունները գրեթե չեն ենթարկվել գրականագիտական վերլուծության նաև Իսպանիայում: Մեր ատենախոսությունն իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեմայի ամբողջական ուսումնասիրության առաջին փորձն է, ինչի արդյունքում առաջին անգամ դասակարգվում-վերլուծվում են հայոց ցեղասպանության թեման պատկերող ութ վեպեր, բանաստեղծություններ ու հրապարկախոսական հոդվածներ, քննվում են դրանց գեղարվեստական-էսթետիկական չափանիշները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեմայի վերլուծությունն է:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել տարբեր հեղինակների կողմից թեմայի պատկերման առանձնահատկությունները, նրանց արժևորումն ու տված գնահատականները 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած սարսափելի իրադարձություններին:

Ելնելով այս նպատակից՝ մեր առջև դնում ենք հետևյալ խնդիրները.

- ցույց տալ թեմայի մշակվածությունն ու զարգացումը, ցեղասպանության քննման հայեցակերպը (ինչպես են պատկերվում հայ և թուրք ժողովուրդները, որոնք են ցեղասպանության դրդապատճառները, հարցադրումների ինչ շրջանակ է առաջ քաշված):

- կատարել ստեղծագործությունների բնագրային վերլուծություն՝ ներկայացնելով կերպարային համակարգի, ստեղծագործական մեթոդի ու կոմպոզիցիոն քննություն:

- կատարել տվյալ ստեղծագործությունների ժանրային դասակարգում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հայոց ցեղասպանությանը նվիրված իսպանացի գրողների ստեղծագործությունները չեն ենթարկվել քննության ինչպես հայ, այնպես էլ իսպանական գրականագիտության մեջ: Բացառություն է կազմում Մարիա Անխելյա Անգլադան, ում գեղարվեստական արձակի վերլուծության համատեքստում մեկ-երկու նախադասությամբ անդրադարձ է կատարվել <<Արամի հուշատետրը>> վեպին: Հարկ է նշել, որ այս ստեղծագործությունների մեծ մասը հայերեն թարգմանված չէ (հայերեն թարգմանվել են Գ. Հ. Գուարչի եռագրությունը, Խ. Ա. Գուտիարանի <<Ռումբը>> և Մ.Ա. Անգլադայի <<Արամի հուշատետրը>> վեպերը¹, և միայն Գուարչի վեպերի հայերեն թարգմանությունից հետո նկատվեց թեմայի նկատմամբ որոշակի հետաքրքրություն, որի արդյունքում հողվածով հանդես է եկել գրականագետ Ա. Հակոբյանը <<Ուշագրավ վեպ հայոց ցեղասպանության մասին (Գոնսալո Գուարչի <<Հայկական տոհմաճառը>>) վերնագրով (Գիտական աշխատություններ, Եր.,

¹ Նշենք, որ Խ. Ա. Գուտիարանի <<Ռումբը>> հայերեն թարգմանվել է Շուշան Սիրոյանի կողմից և տպագրվել 2012 թ. <<Սիրար>> հրատարակչությունում: Ինչ վերաբերում է Մ.Ա. Անգլադայի <<Արամի հուշատետրը>> վեպին, ապա հավելենք, որ վեպի թարգմանիչը Գրիգոր Զանիկյանն է:

ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատարակչություն, 2010, էջ 68-72), իսկ լեզվաբան Ա. Գալստյանը <<Գոնսալո Էռնանդես Գուարչի <<Հայոց կտակ>> վեպ-հուշագրության լեզվաոճական մի քանի հարցեր>> հոդվածում քննում է իսպանացի հեղինակի վեպի լեզվական իրողությունները (Միջազգային գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2012, էջ 5-11): Աշխատանքի գիտական նորության այն է, որ մեր աշխատանքը ոչ միայն իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրության առաջին փորձն է, այլև վերլուծվում են հայոց ցեղասպանության թեման պատկերող վեպեր, բանաստեղծություններ ու հրապարկախոսական հոդվածներ, քննվում են այդ ստեղծագործությունների ժանրային և տիպաբանական առանձնահատկությունները, կատարվում է ժանրային դասակարգում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գրականագիտության տեսական-մեթոդական նվաճումները՝ օգտագործելով համադրման, զուգադրման և համեմատական վերլուծության մեթոդները: Բացի այդ հետազոտման ընթացքում հաշվի են առնվել ժամանակակից գրականագիտական արդի մոտեցումները:

Թեմայի ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ պատմական հայեցակետը, սակայն այդ ստեղծագործությունները պետք է քննել նախևառաջ գեղարվեստական երկի վերլուծության համատեքստում: Նյութը մատուցվում է բնագրերի կոնկրետ վերլուծությունների հիման վրա, հետևաբար, հեղինակների գաղափարների, դիրքորոշումների բացահայտման համար կատարել ենք որոշակի թվով բնագրային մեջբերումներ: Ստեղծագործությունների մեջբերված թարգմանությունները մերն են:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ցեղասպանագիտական ձեռնարկ ստեղծելու, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի <<Ցեղասպանագիտություն>> մագիստրոսական ծրագրի դասընթացների կազմակերպման, ինչպես նաև հանրապետության բուհերում արտասահմանյան գրականության պատմության դասախոսությունների, հատուկ դասընթացների, <<Հայոց ցեղասպանության արտացոլումը գրականության մեջ>> թեմայի ուսումնասիրման ժամանակ:

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնում: Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են ԲՈՀ-ի կողմից ընդունելի ամսագրերում և պարբերականներում, ինչպես նաև ներկայացվել են գիտաժողովներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր ատենախոսությունը թեմայի ուսումնասիրության առաջին փորձն է ինչպես հայ, այնպես էլ իսպանական գրականագիտության մեջ, ուստի օբյեկտիվ պատճառով չէինք կարող ներկայացնել հարցի պատմությունը: Այսպիսով, նպատակահարմար ենք համարել ներածության մեջ ներկայացնել հայ-իսպանական հնագույն առնչությունները, նաև դրանց վկայությունը գրականության մեջ, ինչն օգնում է բացահայտել երկու ժողովուրդների դարավոր փոխհարաբերությունները: Ներածության մեջ ներկայացված է նաև թեմայի ուսումնասիրվածությունը, ատենախոսության մեթոդաբանությունը, գիտական նորույթը, հիմնական նպատակն ու խնդիրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ԳՈՆՍԱԼՈ ԳՈՒԱՐԶԻ ՎԵՊԵՐՈՒՄ

1.1 ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ <<ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՄԱԾԱՌԸ>> ՎԵՊՈՒՄ

Իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեմայի նկատմամբ հետաքրքրության ձևավորման գործում իր մեծ ներդրումն ունի բարսելոնացի նշանավոր ճարտարապետ ու բազմաթիվ գրքերի հեղինակ Գոնսալո Էռնանդես Գուարչը:

Հայկական եռագրության առաջին գրքում գրողը մի հայ գերդաստանի ողբերգական պատմությամբ պատկերում է ցեղասպանության սարսափներն ու ցավը, ավելին, երկրի պատմությունը բեկվում է մի քանի ընտանիքների ճակատագրում: Պետք է փաստել, որ <<Հայկական տոհմաճառը>> եղեռնի պատմավիպական նկարագրությունն է՝ մտացածին կերպարներով, ցեղասպանության պատմության վրա հիմնված փաստերով ու

իրադարձություններով, ինչն ամենևին էլ չի խանգարում ընթերցողին փոխանցելու ողջ դրամատիզմը: Սա ուշագրավ է այն առումով, որ գրողն օղակ առ օղակ բացում է դիպաշարը և յուրաքանչյուր կերպարի պատմությամբ անդրադառնում ցեղասպանության հետևանքներին: Բացի կերպարային համակարգից սրան օգնում է նաև <<Հայկական տոհմաճառի>> դիպաշարը կամ պատմողական կառուցվածքը՝ կազմված առանձին, ավելի փոքր պատմողական հատվածներից, որոնց միջոցով հեղինակը ջանացել է բացահայտել ու բնութագրել ցեղասպանության առաջ բերած բոլոր ենթաշերտերը:

Վեպի տեխնիկական հնարքներից է գեղարվեստական պատումի ու վավերաթղթերի զուգակցումը, հաջորդումը կամ վավերագրական ներդիրի (փաստաթուղթ, հղում) առկայությունը գեղարվեստական տեքստում: Վեպը սյուժետային ճկուն կառուցվածք ունի. հերոսների ճակատագրերն առանձին նովելանման պատմություններ են հիշեցնում, որոնց համադրումն ու միավորումը հնարավոր է դարձնում պատումի կառուցվածքի ամբողջականության վերականգնումը: Սյուժեն միատեղվում է մե՛րթ հեղինակային պատմությամբ, մե՛րթ վավերաթղթով, մե՛րթ հերոսներից մեկի օրագրով ու հիշողություններով, ինչն էլ վեպի կառուցվածքային հնարքներից է:

Անհրաժեշտ է նկատել, որ բռնության ենթարկված կանանց ու բռնության հետևանքով ծնված երեխաների թեմայի անդրադարձը, որը շրջանցվել է հայ գրականության մեջ, իսպանացի գրողի կողմից համարձակ քայլ է, իսկ կերպարները հոգեբանական ճշմարիտ ապրումներից թելադրվող վարքագծի առումով հաջողված են:

Գուարչը հետևողականորեն շարունակում է քննել հոգեբանական բնույթի հարցեր, որոնցում առանձնանում են երկու կարևոր ու հետաքրքրական դրսևորումներ՝ բռնակալի հոգեբանությունը և արյան ներքին կանչի՝ ազգային արմատներին վերադառնալու երևույթը, ինչը կերպարի կողմից ճշմարտության որոնման ու բացահայտման, պատմական խորը հիշողության վկայություններ են:

1.2 ԱՐԵՎՄՈՒՏՔ-ԱՐԵՎԵԼՔ ՀԱԿԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԽՆԴԻՐԸ <<ՀԱՅՈՑ ԿՏԱԿԸ>> ՎԵՊՈՒՄ

<<Հայոց կտակը>> Գուարչի եռագրության երկրորդ գիրքն է՝ պատմավեպ-հուշագրություն, որն ընդգրկում է 35 տարվա պատմություն՝ 1885-1920թթ.: Ժանրային առումով <<Հայոց կտակը>> մոտ է պատմակենսագրական վեպին այն հիմնավորումով, որ հերոսն իր կենսագրությամբ երևան է հանում

պատմական դեպքերի ընթացքը, արտացոլում ժամանակաշրջանի ոգին: Սակայն ըստ արտաքին ձևի ու կոմպոզիցիայի՝ այն վեպ-ժամանակագրություն է, որտեղ առաջին պլան է մղված պատմական իրադարձությունների ժամանակագրական շղթան: Հեղինակը մատնանշում է գեղարվեստական տարածության ու ժամանակի <<բացվածությունը>>. վեպի տարածությունն ու ժամանակը պատմական է ու սոցիալական. այն բաց է 19-րդ դարի վերջի ու 20-րդ դարասկզբի Օսմանյան կայսրության տարածքում՝ պատկերելով տարբեր խավերի ներկայացուցիչների, այդ թվում նաև քաղաքական գործիչների: Սուլթանից մինչև հասարակ զինվորը, թվում է, վարակված են այդ արատներով, և սա հանգեցնում է հասարակության մերկացմանը, ինչը երևան է հանում Օսմանյան կայսրության ամբողջ արատավորությունը. վերևից ներքև կեղծիքի, անօրինականության, շահամոլության վրա կառուցված լինելը: Ըստ էության, հասարակական միջավայրի ցուցադրումը դառնում է վեպի գաղափարական բովանդակության էական հատկանիշներից մեկը՝ ցուցադրել թուրքական հասարակական շրջոնքը: Այս վեպում Գուարչը ոչ միայն նորից անդրադառնում է սուլթան Համիդի կերպարին, այլ հետևողականորեն ստեղծում է բռնակալի կերպարը՝ Աբդուլ Համիդն իբրև չարի յուրատեսակ խտացված մարմնավորում՝ պատկերված սարկազմով ու դիվային գծերով:

Ըստ էության, <<Հայոց կտակը>> պարունակում է դասական վեպի կառուցվածքային տարրերը՝ պատմական, ժամանակագրական, հոգեբանական ու արկածային ժանրերի համադրմամբ: Եթե առաջին վեպում ընտանեկան պատմության շրջանակում ներկայացված են ժամանակի քաղաքական իրավիճակը, պատմական սահմանափակ իրադարձություններ, ապա <<Հայոց կտակը>> վեպում առաջին պլանում պատմական իրադարձություններն ու դեմքերն են, շարժառիթների ու դրդապատճառների պարզաբանումը: Պատմական փաստերի ներմուծումը գեղարվեստական տեքստ ապահովում է պատումի ճշմարտացիությունն ու հավաստիությունը, խորը ռեալիզմով է արտացոլում ժամանակաշրջանի թուրքական պետության մթնոլորտն ու իրականությունը, որտեղ առաջնայինը ատելությունն ու նախանձն է: Ակնհայտ է, որ <<Հայոց կտակը>> հագեցած է քաղաքական վեպի տարրերով, սակայն, միաժամանակ, այն կարելի է դիտարկել ֆրեյձյան <<սոցիալական վեպի>> համատեքստում, ասել է, թե <<սոցիալական վեպի>> շրջանակում պետք է ընդգրկել այնպիսի ստեղծագործություն, որը պատմական որևէ երևույթի հետ ամուր կապվածություն ունի և տվյալ ստեղծագործության գնահատման ու

արժևորման հարցում անհրաժեշտ է տվյալ պատմական իրադրության մանրամասն իմացություն²:

1.3 <<ՍՊԻՏԱԿ ԼԵՌՆԸ>> ՎԵՊԸ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
<<ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՃԳՆԱԺԱՄԻ>> ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

2008թ. հրատարակված <<Սպիտակ լեռը>> վեպը եզրափակում է գուարչյան եռագրությունը: Գուարչն ամենայն մանրամասնությամբ պարզաբանում է ազգերի ազատագրական ճիգը, հայկական խլյակների տարագրությունն ու հանգրվանելը Սիրիայում ու Լիբանանում և այդ երկրներում հայկական սփյուռքի ձևավորման պատմությունը: Թեմատիկ ընդգրկման տարողությամբ այն մոտ է սիրիացի արձակագիր Նեպիլ Սուլեյմանի <<Արևելքի ծիրերը>> քառահատոր վիպաշարին և Իբրահիմ ալ-Խալիլի <<Ալ-հուտա>> վեպին, որը ներկայացնում է 1915-1945թթ. ժամանակահատվածն ընդգրկող իրադարձությունները՝ կապված սիրիական ու պաղեստինյան ժողովուրդների ազատագրական պայքարի ու Մերձավոր Արևելքում հայկական խլյակների հանգրվանելու հետ: Տարածաժամանակային ընդգրկման կտրվածքով վեպը մեծամասշտաբ գործ է (պատկերում է 1909-1940թթ. իրադարձությունները)՝ հարուստ ու հետաքրքրական իրողությունների դրվագումներով, որոնց շնորհիվ այն կարելի է և պետք է էպիկական կտավի գործ համարել: Հետևաբար, մենք գործ ունենք էպիկական ընդգրկմամբ վեպ-ժամանակագրության հետ, համենայնդեպս, դիպաշարի կառուցման և պաթոսի տեսանկյունից վեպի բնորոշ գիծը էպիկականությունն է: Վեպի հիմնական լեյտմոտիվները պատմական ու հոգեբանական են, իսկ սյուժեի կառուցման հիմքը՝ պատմական-վավերականի ու գրողական մտահղացման համադրումը: Վեպում հատկապես ակնառու է Արևելքի իրականության նկարագրությունը, ինչը պատկերված է զարմանալի տիպականությամբ և հեղինակի խորքային գիտելիքների հարստությամբ: Սակայն թերությունն այն է, որ Գուարչը շարունակ ներմուծում է նոր կերպարներ ու մարդկային ճակատագրեր, էպիզոդիկ կերպարներ, ասել է, թե նշագծում է կերպարները, սակայն վերջիններիս բնավորությունների հոգեբանական խորացումը բացակայում է:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐԱԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԽՈՍԵ ԱՆՏՈՆԻՈ ԳՈՒՌԻԱՐԱՆԻ ՎԵՊԵՐԸ**

² French W., The social Novel at the End of an Era, Southern Illinois University Press, 1966, p.7:

2.1 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ԻՍՊԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Այսօր ցեղասպանության մասին ցանկացած ստեղծագործություն այլևս չունի տեղեկատվական նշանակություն, այլ թեմայի անդրադարձը միտված է հաջորդ սերունդներին եղեռնի երկարաժամկետ ազդեցությունից ու ցավոտ անցյալի ծանրությունից ազատելուն: Առհասարակ, թեմայի յուրօրինակությամբ է բացատրվում մամուլում տարբեր գրողների հանդես գալն ու հրապարակախոսության ժանրին դիմելը, իսկ տվյալ գրողների կողմից հրապարակագրի դերի ստանձնումը պետք է պայմանավորել ժամանակակից խնդիրներին արձագանքելու միտումով:

2014թ. վերջերից՝ ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ, իսպանացի մտավորականները հանդես եկան նախաձեռնությամբ՝ <<Հայոց ցեղասպանության հարյուր տարին>> խորագրով, որի շրջանակում մամուլի էջերում ներկայացան ցեղասպանությանը նվիրված բանաստեղծություններով ու հոդվածներով՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելով աշխարհում առաջին ցեղասպանության զոհերին, միաժամանակ իրենց ձայնը բարձրացնելով ընդդեմ ժխտողականության ու մարդկային անտարբերության: Հրապարակախոսության ժանրում նրանք ներկայացան ակնարկի, էսսեի ձևով: Այդ էսսեներում շեշտված ձևով ընդգծվում է և՛ հայոց ցեղասպանության ու հրեական հոլոքոստի համեմատությունը, և՛ աշխարհի երեսպաշտությունն ու քաղաքական շահերով պայմանավորված լուրջությունը, և՛ այդ ողբերգության կրկնվելու վտանգը: Հարկ է հիշել, որ իսպանացի ընթերցողը վաղուց ծանոթ էր թուրքական նկարագրին, որն իր կերպավորումը ստացել էր տաղանդավոր գրող Խուան Գոյտիսոլոյի <<Օսմանյան Ստամբուլ>> գործում, որտեղ իսպանացի գրողը Ստամբուլ կատարած իր ճամփորդական մտորումներում վերականգնում է թուրք էթնոսի մասին Արևմուտքում տարածում գտած կարծիքը. <<Օսմանյան կայսրության շքեղության շրջանում Արևմուտքում թուրքի դոմինանտ պատկերը ներկայանում է որպես բարբարոս, անգութ, դաժան ու արյունաբեր՝ հանձնված մարմնական հաճույքներին ու սողմի գարշելի փչացածությանը>>³: 2014թ. Մեծ եղեռնի նկատմամբ իր դիրքորոշումը հայտնեց գրող Ֆրանսիսկո Դոմենեն՝ հանդես գալով <<Ես հիշում եմ հայոց ցեղասպանությունը. հիշողություն և արժանապատվություն>> հրապարակախոսական հոդված-էսսեով, որում իր ձայնն էր բարձրացնում ընդդեմ լուրջության ու անտարբերության, ինչը, գրողի կարծիքով, նույնպիսի հանցագործություն է, ինչ ցեղասպանությունը, որովհետև

³ Goytisolo J., Estambul otomano, Barcelona, Peninsula, 2003, p. 76:

<<պարտականություն ունենք հիշելու ու խոսելու, որովհետև լուրջությունը հանցակից է>> ⁴ : Հանդես են եկել կատալոնացի իրավապաշտպան, Բարսելոնայի համալսարանի իրավագիտության պրոֆեսոր և Դատապաշտպանների միջազգային քոլեջի նախագահ Խուան Մերելո Բարբերան, գրող Խուլիո Ֆերնանդես Պելասեր, իսպանիայի արվեստի քննադատների միության անդամ Գրեգորիո Վիխիլ Էսկալերան, նավարացի իրավաբան Ֆերնանդո Խոսե Վակերո Օրոկիետան, լրագրող և գրող Վիրխինիա Մենդոսան, բարսելոնացի գրող Խավիեր Մորետո, Դանիել դե Կույան:

2.2 <<ՌՈՒՄԲԸ>> ՎԵՊԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Իսպանացի ճանաչված լրագրող Խոսե Անտոնիո Գուդիարանը՝ իսպանական ազգային հեռուստատեսության ու ռադիոյի լրագրողը, <<Էլ Դիարիո Մոնտանյես>> (<<El Diario Montañes>>), <<Առիբա>> (<<Arriba>>) ամսագրերի խմբագիրը, վեց գրքերի հեղինակ է, որոնցից երկուսը նվիրված են հայերին:

Հայերին ու մասնավորապես հայոց ցեղասպանությանը Գուդիարանն անդրադարձել է 1982թ.՝ լույս ընծայելով <<Ռումբը>> վեպը՝ առաջին անգամ իսպանական գրականության մեջ ներկայացնելով հայոց ցեղասպանության թեման:

Գիրքն ինքնակենսագրական հենքով օրագրություն է, որով գրողը պատմում է 1980թ. դետեմբերի 29-ին Մադրիդի <<Gran Via>> (<<Մեծ ճանապարհ>>) կոչվող հրապարակում ԱՍԱԼԱ-ի պայթեցրած երկու ռումբերի հետևանքով իր՝ ծանր վիրավորվելու պատմությունը: Հայկական թեմայով Գուդիարանի գրած երկու վեպերը կարելի է վերլուծել կենսագրական մեթոդով, ասել է, թե գրական երկի ստեղծման գործում կարևորել գրողի կենսափորձի, ընկալումների, անհատական իմացության դերն ու նշանակությունը: Նկատելի է, որ Գուդիարանը վեպը կառուցում է անցյալ դարի կեսերից իսպանական արձակում տեղ գտած <<օբյեկտիվ վեպի>> սկզբունքներով, ինչը նշանակում է, որ <<գրականությունը վերականգնել է առարկայի արժեքը և սկսել է հատուկ ուշադրություն դարձնել մարդու ներքին ընթացքին>> ⁵ , իսկ վերջինս տեխնիկապես կիրառվում է <<գիտակցության հոսքի>> կամ <<ներքին

⁴ Domene F., Yo me acuerdo del genocidio armenio: memoria y dignidad, 16/12/14, <http://genocidoarmenio.blogspot.com.es/2014/12/yo-me-acuerdo-del-genocidio-armenio.html>

⁵ Castellet J. M., De la objetividad al objeto, Papeles de Son Armadans, 1957, junio, p. 310:

մենախոսության» միջոցով⁶։ Վեպի դիպաշարը միահյուսվում է հերոսի ներքին մենախոսությամբ ու սեփական անձի մասին հերոսի մտորումներով, ինչի շնորհիվ մենախոսությունն ու վեպի ներքին կառուցվածքը չեն սահմանափակվում օրագրի ժանրային ու հոգեբանական հնարավորություններով։ Նկատենք, որ կեցության իմացությունը մարդու ինքնաճանաչման ելակետն ու էությունն է, իսկ գեղարվեստական հյուսվածքը՝ նվազագույնի հասած սյուժետով ու հոգեբանական խորացումներով (ներհայեցությամբ), միտված է բացահայտելու հերոսի ինքնափնտրտուքը, որի ընթացքում նկատվում է հեղինակի նույնացումը օրագրողի կերպարին, ավելին, իրականության ու հորինվածքի սահմանների ջնջումը հեղինակի ու կերպարի միջև։

Ինչպես վերևում նշեցինք, <<Ռումբը>> ինքնակենսագրական-օրագրային արձակ է, թեման՝ *զոհ-դահիճ* փոխհարաբերությունը, տառապանքի ու դժվարագույն իրադրության մեջ անգամ մարդ տեսակը չկորցնելու պատմությունը։ Այս հիմնական թեմայից զատ գրողը հասնում է նոր թեմաների ու երկրորդական մոտիվների՝ ցեղասպանությունը վերապրածների ժառանգների հոգեբանական խորացումների ու հոգեբանական վերքերի բացահայտմանը, մարդու անձնական դրամայի պատկերմանը։ Վեպում դրսևորվում է հոգեբանական վեպի փիլիսոփայական պրոբլեմատիկային բնորոշ նկարագրությունների բացակայությունը, հոգեբանականությունը, զգացմունքային բարձր տոնայնությունը։ Վերադառնալով կերպարի ներքին ենթաշերտերի ուրվագծումների պատկերմանն ու հոգեբանական հերոսի դերին՝ համաձայնենք հետևյալ տեսակետի հետ. <<կարելի է ասել, որ ժամանակակից վեպը, մասնավորապես, հոգեբանական վեպը, բարդ ապրումի պատմությունն ու կազմախոսությունն է։ Գրողը հերոսներին կերպավորում և կյանքի է կոչում նրանց ապրումների ու մտորումների մանրամասն վերլուծության կամ դրամատիկացման միջոցով>>⁷, ինչի դրսևորմանը ականատես ենք վեպում։

Գոյապաշտական սկզբունքով Գուդիարանը պատկերում է սահմանային իրավիճակում հայտնված մարդուն, ով փորձում է հաղթահարել մահվան սարսուռը, ձգտել կրկին ապրել՝ հասնելու անձի ինքնաճանաչմանն ու կյանքի գոյաբանական ընկալմանը՝ այդ ընթացքում կյանքը տեսնելով նոր շրջանակում։

⁶ Տե՛ս Ուելլեք Ռ., Ուորրեն Օ., Գրականության տեսություն, Երևան, <<Սարգիս Խաչենց>>, 2008, էջ 333։

⁷ Սյուրմեյան Լ. Չ., Արձակի տեխնիկա. չափ և խենթություն, Երևան, <<ԳԱԱ <<Գիտություն>> հրատարակչություն, 2008, էջ 127։

2.3 <<ՀԱՅԵՐ. ՄՈՌԱՅՎԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ>> ՎԵՊԸ ՅՈՒՐԱՏԵՍԱԿ ՎԵՊ-ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Հայեր. մոռացված ցեղասպանություն>> վեպը Գուտիարանի երկրորդ անդրադարձն է հայերին ու հայոց ցեղասպանությանը: Վեպը նախապես ունեցել է <<Արարատի ստվերի ներքո>> վերնագիրը: Քսանյոթ տարի անց Հայաստան կատարած իր այցից հետո գրողը կրկին անդրադառնում է հայկական թեմային:

Վեպը ժանրային հստակ սահմաններ չունի, մոտ է ճանապարհորդական տպավորություններով, ինքնակենսագրական հենքով պատմագիտական, մշակութային խորհրդածություններով հագեցած ուղեգրության, որում բացահայտվում է Հայաստանն ու հայ մարդն իր ապրումներով ու մտատիպարով: Այստեղից էլ վեպի կոմպոզիցիոն առանձնահատկությունը. վեպի գլուխները կամ մասերն իրար կապված չեն սյուժեով, որովհետև սյուժե որպես այդպիսին չկա, կան հեղինակային խոհով ու ասելիքով միավորված հատվածներ: Ճանապարհորդությունը Հայաստանով, այն ճանաչելը վերածվում է գրական փորձի և, մասնավորապես, ճանապարհորդություն պատմության միջով՝ այս դեպքում Հայաստանի անցյալից ներկան: Վերջինս ոչ միայն Գուտիարանի վեպի կառույցի էստարերից է, այլև ակնհայտ է դարձնում հեղինակի դիրքորոշումը՝ խորը ճանաչողությամբ պատմել հայրենիքում ու հայրենիքից դուրս ապրող հայ մարդու, նրա հաղթահարած դժվարությունների, իսկ ցեղասպանությունը վերապրածների դեպքում՝ հաղթահարած տառապանքների մասին: Նշենք, որ ողջ գրքում որպես բացառիկ պատկեր-խորհրդանիշ ներկա է Արարատ լեռը՝ որպես հայոց վերածնության ու հավերժ գոյության խորհրդանիշ, <<որպես հայ ժողովրդի հաստատուն մարտահրավեր, որը նա տեսնում ու զգում է, կրկնակի թափվող խորհրդանշական լույս, որը պատկերվում է իր հավերժական ձյուններից, իր անթափանցելի ստվերներից, շատ հեռու սահմաններից՝ միշտ անհաս ու անհաղորդ>>⁸:

Երկրորդ գրքով Գուտիարանն ինքն է փորձում ևս մեկ անգամ խոսել ու մոռացումի թմբիրից հանել մարդկանց (այստեղից էլ վերնագրի ընտրությունը), <<ձգտում կոտրել պատահածի շուրջ մոռացության ու լռության պատը, հասնել պատմական ճշմարտության ճանաչմանը>>⁹, ինչը ևս մեկ անգամ թույլ է տալիս փաստել գրողի ընդգծված դիրքորոշումը:

⁸ Gurriaran J. A., Armenios. El genocidio olvidado, Madrid, Editorial Espasa Calpe, p. 96.

⁹ Gurriaran J. A., նշված աշխատությունը, էջ 28:

Այս գրքում հեղինակի ուշադրության կենտրոնում են կանանց կերպարները, և Գուդիարանն առանձին գլուխ է նվիրել այն կանանց, ովքեր, գրողի բնորոշմամբ, <<առաջին գծում, ուժով վերցրել էին նավի ղեկը մինչև մահ կամ ազատություն, երբ իրենց հայրերը, ամուսինները և եղբայրներն արդեն անհետ կորել էին>>, ովքեր <<քայլել էին սովի, ծարավի, վախի ու մահվան ճանապարհով>>¹⁰: Նմանատիպ դիտանկյունից է ներկայացված Վարդուհի Թորոսյանի կերպարը, ով տեղահանվել էր, Դեր-Ջորը կտրել-անցնելով հասել էր Լիբանան, որբանոցում անցկացրել դեռահասությունը:

Այսպիսով, հրապարակախոսական ուղեգրությունում ցեղասպանության հետևանքով աշխարհի տարբեր երկրներում հանգրվանած հայ ժողովրդի բեկորներին վիճակված կյանքի ու ճակատագրի մասին ունեցած մտորումներից գրողը հյուսում է հայոց արմատների ու էության, ժողովրդի պատմության, արդիականության ու հեռանկարի բարդ համայնապատկերը: Չնայած վեպի հստակ սյուժեի բացակայությանը, ուրվագծային բնույթ ունենալուն ու դրվագայնությանը՝ գրողը ձգտում է կերպավորել հայ ժողովրդի ազգային ոգին ու պատմությունը: Գուդիարանի ընտրած կերպարները պատմական անձինք են, ովքեր, պատմության մեջ լինելով տիպական կերպարներ, նաև խիստ անհատական են ու բացահայտում են ազգային գծեր:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՎԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

3.1 ՄՇԱԿՈՒՅԹԸ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ ՄԱՐԻԱ ԱՆԽԵԼՍ ԱՆԳԼԱԴԱՅԻ <<ԱՐԱՄԻ ՀՈՒՀԱՏԵՏՐԸ>> ՎԵՊՈՒՄ

<<Արամի հուշատետրը>> վեպ-օրագրություն է մի հայ ընտանիքի մասին, որը, հաղթահարելով տարագրության ու հարազատների կորստի ցավը, հանգրվանում է օտար երկրում փորձելով պահպանել ազգային արմատները: Վեպը լայն արձագանք է գտել Կատալոնիայում և ընդհանրապես Իսպանիայում, և գրաքննադատների կողմից անվանվել <<հայոց ցեղասպանության հավաստի ու ցնցող վավերագրություն>>¹¹: Գիրքը հայերեն լույս է տեսել 2008թ., թարգմանությունը կատարել է Գրիգոր Զանիկյանը:

Վեպի գեղարվեստական կառույցի հիմնական դրսևորումներից է

¹⁰ Gurriaran J. A., նշված աշխատությունը, էջ 234:

¹¹ Նկատենք, որ վեպի վերը նշված բնորոշմանը հանդիպում ենք վեպի հայերեն թարգմանության ներածականում (Անգաղա Մ.Ա., Արամի հուշատետրը, Երևան, ԱԿՕՍ, 2008, էջ 3): Իսկ մեր կողմից ուսումնասիրած գրականագետների հոդվածներում նման բնորոշման չենք հանդիպել:

տարբեր պատմող կերպարների հանդես գալը. վեպն ամբողջանում է տարբեր հերոսների պատմած պատմություններով: Խոսքը վերաբերում է ոչ միայն հեղինակի, Վահեի, Մարիկի կողմից պատումը ներկայացնելուն, այլև իրադարձությունների ստերոսկոպիկ (ծավալային) պատկերմանը: Այսինքն, ցեղասպանությունը ներկայացված չէ հեղինակային սուբյեկտիվ ընկալման միջոցով, ավելին, գրողն այդ մասին չի խոսում, այլ ներկայացնում է երկու տարբեր հերոսների՝ մոր և որդու դիտակետից: Փաստորեն, այստեղ գործ ունենք բազմադեմ պատմողի (multiple-narrator) տեխնիկայի հետ: Թեև վեպը ստեղծելիս գրողն ուսումնասիրել և օգտագործել է որոշակի կենսագրական փաստեր, այդուհանդերձ, Վարուժանի կերպարն ընդգծված ձևով հեռու է դիմանկարայնությունից: Ավելին, այն հանդիսանում է գործողություններին չմասնակցող կերպար, որը, սակայն, օգտագործված է վեր հանելու ցեղասպանության ամբողջ ողբերգությունը: Կատալոնացի գրողը, իբրև գրքի մտահղացում, գաղափար, օգտագործել է երկու կարևորագույն իրողություններ՝ պատմությունը և մշակույթը, որոնք բեկվում են 1915թ.-ի ողբերգության մեջ:

Իսպանացի գրականագետների կարծիքով վեպում օգտագործված որոշ կրկնվող տարրերը հանդես են գալիս որպես խորհրդանիշներ: Մասնավորապես, գրականագետ Մերսե Միրոն որպես այդպիսին առանձնացնում է վարդը, ծովը և կարմիր հողը¹²:

Կիրառելով բռնության ու մշակույթի հակադրման հնարքը՝ գրողը զարգացնում է մշակույթային ցեղասպանության գաղափարը: Հարկ է ընդգծել, որ մշակույթի և ցեղասպանության հակադրությունը վեպի իմաստաբանական գիծն է:

Հետաքրքիր է, որ գրականագետ Էնրիկ Պուխոլը <<Մարիա Անխելա Անգլադան և պատմությունը>> հոդվածում որպես գրքի հիմնական արժանիք նշում է կատալոնացի ընթերցողի համար հայ ժողովրդի և նրա մշակույթի հայտնագործումը¹³:

Գրողի համար էական է անդրտեքստային հոգեբանական ու համամարդկային հարցադրումների շղթան:

Նկատենք, որ գրողի վեպի արժանիքը ոչ միայն հերոսների ճակատագրերի ու պատմական վավերագրերի զուգակցումով հետաքրքիր վեպի ծնունդն է ու ընթերցողին հայկական պոեզիայի դասական նմուշներին

¹² Mercè Miró M., <<Aproximació a l'obra de Maria Àngels Anglada. Notes per a una lectura>>, AUSA, volum XIX, núm. 145, 2000, pàg. 244:

¹³ Stéu Enric P., Maira Àngels Anglada i la història, AUSA, vol. 24, núm. 166, 2010, p. 630:

ծանոթացնելը, այլ նաև Վարուժան բանաստեղծ-անհատի կերպարի ճշմարտացի ու խորքային պատկերումը:

3.2 ՄԱՐԴՈՒ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՄԱՐԿ ՄՈՐՏԵԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2008թ. Մարկ Մորտե Ուստարոսը լույս ընծայեց հայոց ցեղասպանության մասին գեղարվեստական վեպ՝ <<Արարատի զավակները>>, որը գրողական մտահղացման, կերպարաստեղծման ու գրական երկի գեղարվեստական ձևի առանձնահատկությունների առումով շահեկանորեն տարբերվում է և նման չէ մինչ այդ իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանությանն անդրադարձած իր հայրենակիցների ստեղծագործություններին: Գրողը խորամուխ չէ ցեղասպանության պատճառների կամ այն իրականացնողների կերպարների պատկերմանը, այն միջավայրին, որը ծնել է նման ոճրագործներ, այլ կարևորում և ընդգծում է հոգեբանական հերոսի դերը: Նա ներկայացնում է մարդուն, ով հայտնվել է սահմանային իրավիճակում, պատկերում է վերջինիս հոգեբանական մտասնեռումներն ու ներքին կոնֆլիկտները: Գրողը գլխավոր կերպարներին ենթարկել է հոգեբանական վերլուծության, որի շնորհիվ ողբերգական, հոգեբանական առումով հագեցված բովանդակությունը վեպը դարձնում է իրականության գեղարվեստական ընկալման լավագույն միջոց: Կերպարներին բնորոշ է խորացումը սեփական ներաշխարհում, ներքին մենախոսությունն ու ինքնամփոփումը (ensimismamiento), մյուս կողմից նկատվում է հերոսների կողմից անցյալի ոչնչացում սեփական գիտակցության մեջ:

Գրքի նորույթը թուրքի դրական կերպարի կերտումն է: Իսպանացի գրողը փորձել է հանդես գալ թուրքի հոգեբանական ինքնաբացահայտումներով, ներաշխարհում կատարվող տեղաշարժերի պատկերմամբ, ինչի արդյունքում Մորտեն կարողացել է կերտել իր թուրք հերոսին մարդկային բնութագրով:

Իսպանացի գրողը մասամբ փորձել է հասնել Կարլ Յունգի այն դիտարկմանը, համաձայն որի խմբային կոլեկտիվ անգիտակցականի արդյունքում է դրսևորվում համաթուրքական մոլագարությունը:

Թուրքի կողմից սեփական մեղքի գիտակցման հարցը ստեղծագործության հանգույցն է, որով գրողը բոլոր տեսակի ոճիրների հեղինակներին հիշեցնում է ապաշխարանքի անհրաժեշտությունը:

Այսպիսով, Մորտեն վեպը կառուցում է ռեալիզմի ու քնարականության ներհյուսմամբ, ընդ որում, կառուցում է դասական վեպ, որի և՛ սյուժեն, և՛ կերպարներն ունեն ոչ ուղղագիծ զարգացում: Դրանք բարդ, հոգեբանական

կերպարներ են, որ օգնում են գրողին առանց պատմական փաստերի վերլուծության ներկայացնել հայոց ցեղասպանությունը, ավելին, ցեղասպանության պատմությունը քննել միայն գեղարվեստական պատումի շրջանակում: Վեպի հիմքում ընկած է հերոսների կողմից կյանքի էքզիստենցիալ ընկալումը, ինչի պատճառով շրջապատող իրականության ու կյանքի քաոսի մեջ նրանք գիտակցում են, որ <<կյանքը ողբերգություն է, և այդ ողբերգությունը մշտական պայքար է առանց հաղթանակի և առանց հաղթանակի հույսի>>¹⁴:

Մորտեն <<սինթետիկ>> գեղարվեստական մեթոդի օգնությամբ կառուցում է իր վեպը, որն իր մեջ ներառում է Նիցշեի փիլիսոփայության հայեցակարգի, էքզիստենցիալիզմի և հոգեբանական հերոսի խնդիրների պատկերում: Մորտեի գեղագիտական որոնումների կենտրոնում մարդու և հասարակության փոխհարաբերությունների, անհատի ներքին և արտաքին աշխարհի բախման պատկերումն է: Կերպարային համակարգի միջոցով գրողը արտահայտել է իր գեղագիտական նպատակադրումը՝ սիրո միջոցով հաղթահարել իդեալների և աշխարհի միջև ընկած անանցանելի խոչընդոտը:

Գրողը չի խորանում պատմական ժամանակաշրջանի մեջ, այլ պատմական բոլոր իրադարձությունները փորձում է մեկնաբանել պատերազմի համատեքստում: Պատերազմն է այն չարիքը, որը պատճառ է դառնում բոլոր տեսակի հրեշավորություններին, նույն հայեցակարգով քննվում է նաև ցեղասպանությունը, ինչի պատճառով բոլոր հերոսները զգում են պատերազմի ավերիչ ներգործությունն իրենց ճակատագրերի վրա: Միևնույն ժամանակ վեպում պատերազմը դառնում է մարդկանց արարքները բացահայտող միջոց:

Նկատենք, որ ստեղծագործության հերոսները ցեղասպանության կապակցությամբ ուղղակի իմաստով ավելի հաճախ են բախվում հայրենիքի վերագտնման թեմային: Սրանք անհայրենիք հերոսներ են (ինչպես Նիցշեն է բնորոշում՝ <<Մենք՝ հայրենագուրկներս>> ¹⁵), որոնք պատմական իրադարձությունների բերումով հայտնվել են օտար երկրներում և շարունակ որոնում են իրենց հայրենիքը: Այս դեպքում ևս Մորտեն անդրադառնում է համամարդկային հիմնախնդրի՝ սեփական արմատներին կառչելուն ու ինքնությունը չկորցնելուն, ինչն այդքան բնորոշ է 20-րդ դարի մարդուն, ով սեփական հայրենիքից դուրս շարունակ ազգային արմատների փնտրտուքի մեջ է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹⁴ Unamuno M. de., Ensayos, t.2, M., Aguilar, 1951, p. 740.

¹⁵ Նիցշե Ֆ., Զվարթ Գիտությունը, Երևան, <<Վան Արյան>>, 2005, էջ 293:

Այսպիսով, ուսումնասիրելով իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեմայի ընդգրկումներն ու առանձնահատկությունները, քննված խնդիրների շրջանակը, կարող ենք արդյունքներն ամփոփել հետևյալ հիմնադրույթներում.

1. Իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանության թեման պատկերվել է նորովի: Թեման ներկայացված է չորս հեղինակների ութ վեպերով, հրապարակախոսական հինգ հոդվածներով ու չափածո չորս ստեղծագործություններով: Իսպանացի գրողները ցեղասպանությունը քննում են 20-րդ դարին բնորոշ գոյաբանական՝ աշխարհի ու մարդու ամբողջականության քայքայման, մարդու գոյության կեցության ուրոնումների հայեցակերպով, որտեղ ցեղասպանությունը դիտարկվում է որպես համամարդկային հիմնախնդիր:

2. Ցեղասպանության թեման իսպանական գրականության մեջ արտահայտված է ինքնակենսագրական արձակի բոլոր ենթատեսակներով (օրագիր, ուղեգրություն, հուշագրություն և ինքնակենսագրական վեպ): Ժանրային պատկանելիությունը դժվար է որոշել, ինչը բացատրվում է գրողների կողմից մի քանի ժանրատեսակների հատկանիշների միահյուսմամբ, որը մեկ անգամ ևս փաստում է, որ <<սինթետիկ>> գեղարվեստական մեթոդով կառուցված ստեղծագործությունը բնորոշ է ժամանակակից գրականությանը: Ժանրատեսակի առումով այս վեպերը պետք է դասակարգել որպես վեպ-օրագրություն, վեպ-ուղեգրություն, վեպ-ժամանակագրություն և պատմական վեպեր:

3. Իսպանական գրականության մեջ ցեղասպանությունը ներկայացված է համիդյան ջարդերից մինչև 1915թ. և ապա հետեղեռնյան շրջանը՝ վերապրածների ու ցեղասպանության անմիջական զոհերի ժառանգների հոգեբանական տրավմաները, անտարբերությունից ծնվող ցավն ու շարունակվող ցեղասպանությունը (քանի դեռ ցեղասպանությունը չի ճանաչվել ու դատապարտվել համայն աշխարհի մարդկության կողմից, այն շարունակվում է): Ավելի քան մեկդարյա հեռավորությունը գրողներին թելադրում է թեմային անդրադառնալ հեռավորության վրա՝ ուշադրությունն ավելի շատ կենտրոնացնելով առաջ բերած հոգեբանական խնդիրներին: Իսպանացի գրողները հայոց ցեղասպանությանն անդրադառնալիս ուշադրություն են դարձնում հատկապես ցեղասպանության առաջ բերած հոգեբանական հետևանքներին և *զոհ-դահիճ* փոխհարաբերությունների պատկերմանը:

4. Թեման յուրահատուկ է ներկայացված գրողների կողմից արձարծված հարցադրումների ուղղվածությամբ: Գոնսալո Գուարչն առաջիններից էր, ով կերտում է իսլամացած հայ կանանց կերպարներ, Խ.Ա. Գուտիարանը պատմում է

ցեղասպանության հետևանքով առաջացած հայկական ահաբեկչության մասին, Մ.Ա. Անգլադան 1915թ. ողբերգությունը դիտարկում է մշակութային ցեղասպանության համապատկերում, իսկ Մարկ Մորտեն ցեղասպանությունը ներկայացնում է պատերազմի համատեքստում՝ նպատակ ունենալով պատկերել մարդու հոգեկան աշխարհի խաթարումը և պատերազմի ազդեցությունը մարդու հոգեբանության վրա: Չնայած վերը նշվածին՝ զուտ գեղարվեստական առումով Գ. Գուարչի վեպերի դեպքում կա սայթաքելու վտանգ, ինչը շատ դեպքերում բացատրվում է վավերագրության ու գեղարվեստի, պատմության ու գրականության սահմանների ներթափանցումով:

5. Իսպանացի գրողները խոսում են կրկնակի ցեղասպանության մասին՝ ֆիզիկական և մոռացության: Եթե Գուտիարանի մոտ հայոց ցեղասպանության մոռացված լինելը ներկայացված է առաջին պլանում և ընդգծված է սկսած ստեղծագործության վերնագրից, ապա մյուս հեղինակների մոտ մոռացումը ևս դատապարտելի է, բայց արտահայտված է գեղարվեստական ստեղծագործության ենթատեքստում, կամ ստեղծագործության մտահղացման պատճառն է: Ընդ որում, իսպանական գրականության մեջ կրկնակի ցեղասպանությունը ներկայացվում է նաև պատմական հայեցակարգում. բացի 1915թ.-ից ցեղասպանություն որակել նաև 1894-96թ. համիդյան կոտորածները:

6. Կերպարային համակարգի առումով գրողները ստեղծել են մտացածին կերպարներ, ինչը սակայն չի խանգարում, այլ, ընդհակառակը, լայն հնարավորություններ է ընձեռում գրողներին՝ կերտելու հայկական հոգեբանությամբ ու մտախառնվածքով հավաստի կերպարներ, իսկ գիրք ներմուծված փոքրաթիվ պատմական դեմքերը գեղարվեստական տեքստում հանդես են գալիս գրական դիմանկարի շրջանակում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. <<Հայոց ցեղասպանության թեման իսպանական արձակում>>, Գիտական աշխատություններ, Եր., 2015, էջ 170-177:
2. Հայոց ցեղասպանության գեղարվեստական կերպավորումը Մարիա Անխելա Անգլադայի <<Արամի հուշատետրը>> վեպում, Հայագիտական հանդես, Եր., 2016, N 1 (31), էջ 54-62:
3. Հայոց ցեղասպանության գեղարվեստական կերպավորումը Մարկ Մորտենի <<Արարատի զավակները>> վեպում, Հայագիտական հանդես, Եր., 2016, N 2 (31), էջ 153-160:
4. The Specific Characteristics of Depictive Portraying of Armenian Genocide in Spanish Literature, Բանբեր հայագիտության, Եր., 2016, N 2 (11), էջ 150-157:

КАРАПЕТЯН СИРАНУШ АНДРАНИКОВНА **ТЕМА АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В ИСПАНСКОЙ ЛИТЕРАТУРЕ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата
филологических наук по специальности 10.01. 07 – 'Зарубежная литература'.

Защита диссертации состоится 03.02.2017 года в 14:00 на заседании
специализированного совета ВАК 003 Литературоведения имени М. Абегяна НАН
РА по адресу: ул. Григора Лусаворича 15, г. Ереван, 0002, Республика Армения.

РЕЗЮМЕ

Геноцид армян является величайшей болью и трагедией не только армянского народа, но и всего человечества. Несмотря на столетнее расстояние, проблема армянского геноцида не утратила свою актуальность, пытаюсь получить осуждение и предотвращение любого геноцида вообще.

В диссертации рассматриваются те произведения испанских писателей, обратившихся к армянскому геноциду, в которых для испанского читателя раскрывается история Османской империи и армянского геноцида, атмосфера того периода, которая породила геноцид. Представлена исследованность темы, изображение темы разными авторами, применение художественных принципов и стандартов, аспект рассмотрения геноцида, характеристики армянского и турецкого народов, мотивы совершения геноцида, круг выдвинутых вопросов. Тему человеческого одиночества, зародившуюся из-за духовной пустоты жизни, писатели рассматривают в контексте первого геноцида 20-ого столетия. Писатели ставят перед собой цель предстать интерпретацией исторической истины, а некоторые из них попытались изобразить геноцид в рамках взаимоотношений человека и войны. Основной темой романов является тема взаимоотношений жертва-палач, история того, что даже в сложнейшей ситуации страданий нельзя потерять человеческий род.

Проблематикой романов является человек и его проблема, когда эта проблема более углубляется в условиях ослабления нравственных ориентиров жизни. Таким образом, можно сказать, что наша работа является первой попыткой исследования темы армянского геноцида в испанской литературе. Исследование состоит из введения, трех глав, заключения и списка литературы.

Во введении представлена также исследованность темы, методология, научная новизна, структура, основная цель и задачи диссертации. В первой главе рассматривается трилогия испанского архитектора и писателя Гонсало Эрнандеса Гуарча, посвященная армянскому геноциду: романы «Армянское древо» (2002г.), «Армянское завещание» (2008г.) и вышедшая в свет в 2009г. роман «Белая гора» («Человек Востока»). Вторая глава посвящена романам известного испанского журналиста Хосе Антонио Гурриарана с автобиографической основой и публицистическим пафосом: «Бомба» (1982г.),

«Армения. Забытый геноцид» (2008г.) а также статьям и произведениям, написанными с публицистическим духом, освещающими тему армянского геноцида в испанской прессе.

А в третьей главе мы представили анализ романов «Дети Арарата», «Кавказ между легендой и “Калашниковым”» (2008г.) каталонского фотографа и писателя Марка Морте; «Тетрадь Арама» (1999г.) Марии Ангелъс Англада, а также анализ стихотворений Аиды Акоста и Сантоса Домингеса Рамоса.

В испанской литературе тема армянского геноцида изображена с новых точек зрения. Тема представлена восьмью романами четырех авторов, пятью публицистическими статьями и четырьмя стихотворными произведениями. Испанские писатели рассматривают геноцид в онтологическом аспекте, свойственном 20-ому столетию, то есть с точки зрения разрушения целостности человека и мира, жизненных поисков человеческого существования, где геноцид рассматривается как мотив вышеуказанных явлений, причем как общечеловеческая проблема.

В испанской литературе “геноцидальные” произведения представлены богатым жанровым разнообразием: роман, рассказ, стихотворение, эссе, публицистическая статья. Тема геноцида со всеми разновидностями автобиографической прозы (дневник, путешествие, мемуары и автобиографический роман), историко-художественными жанрами (которые предоставляют лучшие возможности для освещения исторических, национальных проблем) выражена в испанской литературе. Вопрос об определении конкретной жанровой принадлежности достаточно трудный, что объясняется объединением характеристик нескольких жанров со стороны писателей, что в свою очередь свидетельствует о том, что произведение, построенное “синтетическим” художественным методом свойственно современной литературе в целом. С точки зрения жанра эти романы следует классифицировать как роман-дневник, роман-путешествие, роман-хроника и исторические романы.

Геноцид в испанской литературе представлен начиная с гамидовских погромов до 1915 года и далее период после геноцида, то есть психологические травмы переживших геноцид и непосредственных потомков жертв геноцида, боль, порождающаяся безразличием и продолжающийся геноцид (пока геноцид не принят и осужден, он все еще продолжается). Почти столетнее расстояние диктует писателям обращаться к теме с расстояния, концентрируя большее внимание на изображение выдвинутых психологических проблем. Вообще, с точки зрения обращения к теме армянского геноцида в испанской литературе наблюдается следующая тенденция: испанские писатели обращают внимание особенно изображению психологических последствий геноцида и взаимоотношений жертва-палач.

SIRANUSH ANDRANIK KARAPETYAN

THE ARMENIAN GENOCIDE IN SPANISH LITERATURE

Dissertation for obtaining the scientific degree of candidate of Philological Sciences, in the specialty of "Foreign Literature"(Specialty Code 10. 01. 07).

The defense of the dissertation is scheduled for 03.02.2017

14:00, at the meeting of the Specialized Council of Literary criticism 003 of the Institute of Literature after M. Abeghyan, NAS RA. address: 15 Grigor Lusavorich str. 0002, Yerevan, Republic of Armenia.

SUMMARY

The Armenian Genocide is not only the greatest pain and tragedy of the Armenian people but also of the whole humanity. Despite the century distance, the Armenian Genocide issue has not lost its relevance, trying to get all the condemnation and prevention of any genocide.

In the thesis there are examined the works of the Spanish writers who touched the theme of the Armenian genocide. Here the atmosphere, the period and the history of the Ottoman Empire and the Armenian Genocide are disclosed to the Spanish reader. There are presented the development of the theme, the depicting of the subject by various authors, the application of the artistic principles and standards, the outlook of the genocide review, the characteristic of the Armenian and Turkish peoples, the genocide reasons and the scope of the raised issues. In the context of the first genocide of the 20th century the authors examine the theme of the human loneliness, nascent from the spiritual emptiness of life. The goal of the writers is to come up with the interpretation of the historical truth, and some of them have attempted to depict the genocide within the scope of the relationship between man and war. The main theme of the novels is the executer-victim relationship, the history of not losing the mankind even in the suffering and difficult situation. The issue of the novels is the human being with his problem, when it is further exacerbated in the conditions of the weakening of moral reference points. Thus, we can say that our work is the first attempt of studying the theme of the Armenian Genocide in the Spanish literature.

The study consists of introduction, three chapters, conclusion and bibliography. The introduction also presents the study of the theme, the methodology of the thesis, the scientific novelty, the structure, the main aim and objectives. The first chapter examines the Catalanian architect and writer Gonzalo Hernández Guarch's trilogy dedicated to the Armenian Genocide: 'The Family Tree' (2002), " The Armenian Testament (2008) and The White Mountain, (<<The Oriental man>>) novels, published in 2009.

The second chapter is dedicated to the famous Spanish journalist Jose Antonio Gurriaran's novels, written with the biographical base and journalistic pathos, 'The

Bomb' (1982), " The Armenians: forgotten Genocide '(2008) and the articles, covering the topic in the Spanish press, and the works written with the journalistic breath. And in the third chapter we have presented the analysis of such novels as «The Caucasus between legends and Kalashnikov», "The Sons of the Ararat" (2008), written by the Catalan photographer and writer Marc Morte and "Aram's pocketbook" (1999) by Maria Angels Anglada. We have also introduced the analysis of the poems written by Aida Acosta and Santos Dominguez Ramos. Thus, studying the inclusions and the specifications of the Armenian Genocide theme, the scope of the examined issues in the Spanish literature, we can summarize the results in the following provisions:

In the Spanish literature the theme of the Armenian Genocide is featured from new perspectives. The theme is presented with eight novels of four authors, five journalistic articles and four poetical works. The Spanish writers examine the genocide with the aspect of the degradation of the integrity of the world and human being, the living searches of human existence, typical to the 20th century. Here the genocide is considered as a motive of the phenomena listed above, moreover, as a universal problem.

In the Spanish literature the "enormity" works are presented with a rich variety of genres: novel, novelette, poem, essay, journalistic articles. The theme of the Genocide with all the subtypes of the autobiographical prose (diary, tour, memoirs and autobiographical novel), and the historical genres (which offer the best opportunities for the discussion of the historical and national issues) is expressed in the Spanish literature. It is difficult to define the specific genre affiliation, which is explained by the combination of the features of several genre types, used by the writers. It is once again proved that the work, created with the 'synthetic' artistic method, is characteristic to the modern literature, in general. In terms of the genre type, these novels should be classified as a novel-journal, novel-tour, novel-chronicle and historical novels.

In the Spanish literature the Genocide is presented from the Hamid massacres to 1915. Then the psychological trauma of the survivors of the post-genocide period and the descendants of the victims of the genocide, the pain born from indifference and the continuing Genocide are introduced in the Spanish literature (as long as the Genocide has not been recognized and condemned, it continues). The distance of nearly one hundred years dictates the writers to address the theme of the genocide from distance, focusing their attention on the psychological problems. In general, the following tendency is observed, when talking about the Armenian Genocide in the Spanish literature: the Spanish writers pay attention to the psychological consequences, caused by the genocide, as well as the torturer-victim relationship.